

հանուր կանոնը որ կը տրամադրէր «բաց ունեւ զգուռն ողորմութեան ի պէտս կա- բօտելոց»:

Արտաքին յարաբերութիւնները խիստ կանոններու տակ էին. կոյսերը մեծ մա- սամբ տեղացի ըլլալով՝ ունէին իրենց մօ- տիկ և հեռաւոր արեւնակից ազգականները և բարեկամները: Արտօնուած էին այցե- լութիւն տալ և ընդունիլ երկու ամիսը ան- զամ մը, երկու միաբանակից քոյրերու հետ միասին, և այդ՝ ցերեկուայ ժամերուն մի- այն: Դուրսը գիշերելը արտօնուած էր մի- այն, երբ մօտիկ արեւնակից ազգական մը իր վերջին օրը կ'ապրէր և իրենց ներկա- յութեան պէտքը կը զգացուէր. յետոյ մէյ մըն ալ մօտիկ ազգականներու մահուան պարագային՝ սգաւորները միութարելու հա- մար, այս ալ դարձեալ ընկերներով: Դուր- սէն կրնէր կրնալին վանքի մէջ գիշերել, երբ իրենց մօտաւոր ազգական կոյսը հի- ւանդ կամ մահամեծ ըլլար:

Կոյսերը արտօնուած էին մասնակցելու դուրսի յուզարկաւորութեանց՝ երբ յատուկ խնդանք ըլլար: Հիւանդութեանց, մահ- ուան և այլ դժբախտ պարագաներու մէջ, Ս. Կատարինեան վանքի կոյսերը՝ Զուգայի կանանց միութարութեան մեծագոյն աղ- բիւրն էին:

Վանական կենցաղի և կարգապահու- թեան դէմ եղած ապօրինութիւնները, երբ պատահէին, Մայրապետը կը քննէր ու կը տնօրինէր պատիժը, իսկ ծանր պարագա- ներուն, երբ պէտք տեսնուէր՝ կը դիմուէր Թեմակալ Առաջնորդին, և անոր օժանդա- կութեամբ կը կարգադրուէր:

Տնտեսութիւն: Կոստաստանի տարեկան հասոյթը կը գոյանար կառուած գումարնե- րու տոկոսներէն, սեպհական կալուածներու արդիւնքներէն և վարձքերէն, ու զանազան բարեպաշտական նուէրներէ (զանձանակա- գրամ, ուխտագրամ, լուսադին և այլն), գիւղերէն եկած արժուիք և այլ սննդեղէն, միլտութեան, պսակի և յուշարկաւորու- թեան առիթներով տրուած նուէրներէ:

Հասոյթը կը յատկացուէր զլիսաւորա- բար Միաբանութեան սնունդին և զգեո- տուց, վանքի և կալուածոց պահպանման և նորոգութեանց, մնացեալը նպաստի և ողորմութեան: Միաբանները իրենց անձ- նական մանր ծախքերը կը հոգային իրենց

ԼԵԶՈՒԱԳՐԻՏԵԿԱՆ

ԱՍՈՐԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԵՐԷՆԻ ՎՐԱՅ(*)

(Շարունակութիւն ՍԻՌ 1944, էջ 92)

Հայերէն սիւք համաձայն չէ ասորերէն զիմ ձեւին, որի հետ նոյն են արար. զիկ, ասուր. զիկու. բայց բարբառում կար ան- շուշա սիւք ձեւը, որին ապացոյցն է արար. ցիւք և մանաւանդ սուսեր. սիգ:

Հայերէն յամոյք համաձայն չէ ասոր. յախմուրա ձեւին, որի հետ նոյն են երբ. յախմուր, արար. յախմուր. բայց բարբա- ռում կար անշուշտ յամուր ձեւը, որին ա- պացոյցն է արար. յամուր օարու եղջերու:

Հայերէն հարբալ նախաձայնի կողմից համաձայն չէ ասորերէն արբալա բառին. բայց բարբառում կարող էր օ ձայնի տեղ լինել մի աւելի թաւ հնչիւն. հմթ. արար. զիբալ մաղ, որից էլ փոխառեալ թրք. զալբուր:

Հայերէն օղբայ շատ անհամաձայն է ասոր. օթալթա բառին. բայց հմթ. նոր ասոր. օթօլթ, որ կարող էր տալ օղբայ, ի ձայնաւորներէ-սղմամբ և կրկնակ օ ձայնի միացմամբ:

Հայերէն մաօար համաձայն չէ ասոր. մաաարա ձեւին. բայց հմթ. նոր ասոր. մրօար, արար. միօար, միմօար, քրդ. մրօար:

Ասորերէն նոյն անձանօթ բարբառի մե- շոցով կարելի է բացատրել նաև մի խումբ այնպիսի բառեր, որոնց մեկնութիւնը ասու-

(*) Շարունակութիւն մեծաման հնդկական Վա- մուրիւն Հայ Լեզուի գործն (ԺԱ. Գրուի):

ձեռագործի արդիւնքներով. անկէ կը հո- զային նաև Սիւղեղույ սրբազան անօթից, զգեստուց, վարադոյրներու և փոռցներու ծախքերը: Շատեր իրենց ձեռագործի ար- դիւնքներէն բաժին կը հանէին բարեգոր- ծական նպատակներու և աղքատաց:

կան զբաղանք ձեռով անբաւարար պիտի համարէինք ալլապէս: Անա մի քանի օրէնս կենք. խլուղ, որ համեմատուած է աւտորէն խուլղա հոմանիշի հետ, բայց ձեռն տարբերութեան պատճառաւ մերժուած է. բայց եթէ նկատի առնենք արաբ. խուլղ, մանաւանդ ասորի երկրորդական խալղուղա ձեռք է մտածենք որ ասորի բարբառը կարող էր է՛լ աւելի համապատասխան մի ձեռնենալ, համեմատութիւնը կը չշուռի:

Առնեն կարելի է համեմատել ասոր. առնաւա հոմանիշի հետ. բայց պիտի մերժուէր ձեռք ձեռն տարբերութեան պատճառաւ. սակայն երբ նկատենք որ ասորի Ծ ձայնը համապատասխանուած է հնագոյն առաջինականի (հմտ. ասոր. առաւ - արապ. աղ), և մտածենք որ նոյն անձանք բարբառում էլ այդ ձայնը կարող էր առաջինական հնչուած ունենալ, վերոյիշեալ համեմատութիւնը կը ճշտուի:

Պախիւ կարելի է համեմատել ասոր. բախր բառի հետ, որի հետ նոյն են երբ. բախր, արաբ. բախր, առաբ. բուխուրու. բայց ձայնական օրէնքները թոյլ չեն տալիս. միայն եթէ նկատի առնենք քաբ. բառային մի աւելի յարմար ձեռք, գծաբառութիւնը կը ջնջուի:

Խղուղն կարելի է համեմատել ասոր. խլեղնա, արամ. խալաղն, արապ. հալա. զուռ հոմանիշների հետ, միայն բարբառային ձեռք միջնորդութեամբ, առանց որի ձայնական օրէնքները թոյլ չեն տալիս:

Եթէ մեր ակնարկած ասորական բառը բառը ունէր այնպիսի ձեռք, որոնք հնչական տեսակետով տարբեր էին Նդիսիոյ զրական լեզուից, զարմանալի չէ լինել եթէ ենթադրենք՝ որ նա կարող էր ունենալ այնպիսի բառեր, որոնք ամբողջապէս պակաս էին Նդիսիոյ զրական ասորերէնի մէջ: Իրօք որ հայերէնը ունի մի քանի այնպիսի բառեր, որոնք յայտնի կերպով սեմական են, սակայն չկան ասորերէնում: Այս քառերը պէտք է լինին յիշեալ անձանք բարբառից, եթէ սակայն չեն պատկանում այն կորած բառութիւններին, որ ասորական զրականութիւնը առիթ էլ ունեցել աւանդուած: Այսպէս են սուր, ջալլամ, ցամաք եւ այլն:

Երբ ասում ենք թէ հայերէնը փոխառութիւններ է կնքել իր հարեւան ասորա-

կան բարբառից, պէտք է կարծել թէ մենք իսպառ հերքում ենք զրական ասորերէնի արժէքն ու ազդեցութիւնը: Ընդհակառակը շատ բառեր ուղղակի զրական ճամբով, նոյն իսկ գրքերի վրայից անցել են հայերէն: Արան իբրեւ ապացոյց ծառայում է այն հանգամանքը, որ կան բառեր՝ որոնք նոյն իսկ սխալ ընթերցանութեամբ անցել են հայերէնի: Այսպէս՝ ասեսաւրոն Եւս. պոմ. 311 սխալ կարգացուած բնագրի դիսեսաւրոն ձեռք (չորս աւետարանները). — յասպիմիս ազոուարաշնութիւն Եւս. պոմ. 16. բընագրի օրապիմ ձեռք մէջ առաջին տառը ասորերէնի սովորական սեռականի մասնիկը կարծելով ձեռացած: Ասորական բնագրից հասարակ տառագարձութիւններ են նաեւ իբրամն գրիք մնաղորդաց, կաղայ «գող», ասորիսիպայ ազորագլուխ, սափա ձեռք, քոսայ «երկիր», սահրայ լուսին, աբիոն «աղքատ» եւ այլն, որոնք երբեք հայ ժողովուրդի լեզուի մէջ մտած չեն:

Այնու մանաւանդ այս կարգի փոխառութեանց թիւը մեծ է և հայերէնի ասորական փոխառութիւնները պարակական փոխառութեանց նման կրում են ժողովրդական բնույթ: Այսօր էլ այդ փոխառութիւնները ապրում են մեր լեզուում և գրեթէ կէսից ավելին գործածական է բարբառներում ևս կամ գրական լեզուի մէջ (հիշաւ հաշուով 96 բառ՝ 83 անգործածականների դէմ): Նոյնիսկ մի քանի այսպիսի բառեր՝ որ մենք պիտի կարծէինք թէ ասորական բնագրից հասարակ ու անկենդան տառագարձութիւններ են, իրական գործածական են բարբառներում. այսպէս՝ ամղան բառը որ չորս անգամ միայն գործածուած է հայ մատենագրութեան մէջ և որ Ս. Գրքի ասորական թարգմանութեան հասարակ մէկ տառագարձութիւն է համարուած, այժմ էլ կենդանի է Ակնայ բարբառում՝ արղան ձեռք. — մաւաւ «աղոց» մէկ անգամ գործածուած Մագիստրոսի մօտ՝ սովորական բառ է Զարաբաղի բարբառում. — աղուլայ գործածական է Մուշ, Ակն, Ուրբերդ, Բուլանըխ և մի քանի այլ փոխալ նշանակութեամբ էլ Սալմաստ և Վան. — ապուլայ՝ անասօղ բառ, մէկ անգամ գործածուած հայ մատենագրութեան մէջ, կանոնաւոր գործածութիւն ունի Վանի, Մոկաց և Ուոյի բարբառում:

Ասորական փոխառութիւնների մի ժառը բնիկ ասորի էէ, այլ պարսկերէնից, յունա-րէնից և լատիներէնից անցած ասորերէնի է յետոյ ասորական ձեւի ու կերպարանքի տակ՝ այդ լեզուից անցած հայերէնի։ Բառերից մի քանիսը հայերէնը փոխ է առել երկու անգամ։ Մի անգամ ասորերէնից և միւս անգամ առաջին փոխառու լեզուից։ աշխատէ որ միեւնոյն բառը ներկայանում է մեզ այժմ երկու տարբեր ձեւերով։ Ահա այս երկու կարգի փոխառութիւններից մի քանի օրինակ։

Աղուզայ-աղողայ — յն. աղոզոս
Ախուր-ախորիա — յն. Խխորիա-Խխորի
Աղեմ-ըղեմ — եբր. եղեմ — յն. եղեմ — հյ. եղեմ
Լոււնայ-լումա — լատ. Լումուս
Գորայ-գորա — յն. խորա
Աստաթիկայ-աստաթիկա — յն. աստաթուս
Փիլիսոփայ-Ֆիլիսոփա — յն. Ֆիլիսոփոս-փիլիսոփոս
Հոփսորայ-Հիփսորա — յն. ռոփսոր-հոփսոր
Քասր-քասրա — յն. քեստրոն-քեստրոն
Քարեի-սարեի — եբր. քարեի — յն. քարսիս
Ապուղայ-ապուղա — լատ. ամպուլլա

Գալով այն հարցին թէ երբ են կատարուած ասորական փոխառութիւնները հայերէնի մէջ, պատասխանը հետեւում է բոլոր նախորդ տուեալներէրէ։ Փոխառութիւնները սկսուել են Ն. Ք. երկրորդ դարից և մինչև այսօր էլ շարունակոււմ են, ի հարկէ շատ տարբեր չափերով։ Գրիստոսից առաջ կատարուած փոխառութիւնները՝ որոնք հայացած ասորիների միջոցով մտան հայերէնի մէջ, Հայաստանի հարաւային բնիկների լեզուում կարող էին լաւ լինել, բայց նրանց մի փոքր մասը միայն ընդհանուր հայերէնի սեպականութիւնը դարձաւ։ Այս հնագոյն փոխառութիւնները ճանաչոււմ են նրանով, որ կատարուած են ասորերէնի բացարձակ ձեւից (ինչպէս ցեղեւ, կեղեւ) եւ հետեւում են հայերէնի սղման ու ամփոփման օրէնքներին (Մժբին, հրեայ, ուրբար)։ Ասորական փոխառութեանց մեծագոյն մասը կատարուել է քրիստոնէական զարգացման առաջին շրջանին (Յ. Ք. Բ — Ծ դար)։ սրանք զլիսաւորապէս ասորերէնի սաստիկական ձեւից են ծագում, հնագոյնները հետեւում են դեռ հայերէնի սղման ու ամփոփման օրէնքներին, աւելի նորերը՝ ոչ։ Ծ. դարուց

յետոյ կատարուած փոխառութիւնները սակաւաթիւ են և բնաւ չեն հետեւում սղման ու ամփոփման օրէնքներին։ Այսպէս՝ սւլ ժամանակի փոխառութիւններ են ըստ Հիւբը-մանի՝ ծորա, մանիւղակ, օւսումայ, փոււնայ, զոււրպայ, օստաւալ, օւսփայ, օոււփայ, օուկայ, մախար, որոնք առնուած են Ը-ԺԴ դարերին։ Այս եզրակացութեան հասնում է Հիւբըման հետեւեցնելով նոյն բառերի գործածութեան ժամանակից հայ մատենագրութեան մէջ, բայց այս բանը կարող է խաբուսիկ լինել։ Վերջապէս նորագոյն ժամանակի փոխառութիւնները կարող է միայն մատենների վրայ հաշուել և բոլորի էլ զըստեւում են միայն Ուրմիոյ — Սալմաստի բարբառում։ Ինչպէս կատար ասորի քահանայ Ուրմիոյ բարբառում։

Փոխառութեանց համար ընդունելով այսքան երկար ժամանակ, որոշ բառեր կարող են երկու անգամ փոխ առնուած լինել։ այսպէս օրինակ՝ ունինք կեղեւ բառը հին հայերէնից եւ նոյնի երկրորդ ձեւը կլեպ, որ զարգածառակ է միայն բարբառներում։ Երկուսն էլ փոխառուել են միեւնոյն ասորական բլանմա ձեւից, մէկը հնագոյն շրջանում, երկրորդը աւելի յետոյ, թերեւ երրորդ շրջանում։

ԳՐԱԾ. Հ. ԱՅԱՌԱՅԱՆ



ԲՆԹԱՆԻՄԻ ԳԻՇԵՐ

Բերդենի ամէր ցեղեւ, երկինք աստղով է լցուել. Խաղաղութիւն մը կ'իջնէ մեծայայտ, հոգեբաւ, Ու անոր հետ՝ բառաբեմ, մաղ մաղ սկի կը ցաղի Անուանին մէջ երկնեղով խորհուրդ մեծ, սմանելի։

Ա՛հ, սրտաւ որդորդիւմ. Խաւաք անտ կ'անցայտի, Լաւաւարդ տղեւն մեղեմի, հակա փոխադին կապտի, Անբաւարքիւնն է հոգեւ ամալ բեմեղ աւ սընդուս։

Ու օրեգեղ մարդ, Բերդենի ամէր աստղին օսկ Լաւ կը զգնու երկնաւար, հորեւալկեւն երբ յստկ «Փառք ի քարանդա» կ'երգն հովիւներուն գեմամած, Ուր հիւսեղի կը լռեմ օտար քիչէ Եւ Առաւած։